

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով Անգլիայի հայոց հայրապետական սյուսվիրակ և առաջնորդ Տ. Ներսես եպս. Պոլապալյանի միջնորդությանը, բարեհաճել է Իր հայրապետական բարձր գնահատությանն արժանացնել Լոնդոնի հայոց եկեղեցու Համայնքային Խորհրդի չորս անդամների և Համայնքային Խորհրդի Օժանդակ Տիկնանց Հանձնախմբի չորս անդամուհիների եկեղեցանվեր գործունեությունը ու նրանց պարգևատրել «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով:

«Աստուծոյ ողորմութեամբ, Մենք Հայրապետ Ամենայն Հայոց երջանիկ ենք հաստատելու, թէ բաւում տարիներ շարունակ ինքնայօժար նուիրումով ու բարի եռանդով մասնակցած էք Լոնտոնի Համայնքային Եկեղեցական Խորհուրդի գործունէութեան, ձեր կարեւոր նպաստը բերելով համայնքի եկեղեցական ու ազգային կեանքի յառաջընթացքին:

Մենք եւս սրտանց կը գնահատենք ձեր եկեղեցանուէր գործունէութիւնը եւ սիրով ընդառաջելով Անգլիոյ հայոց հայրապետական պատուիրակ Գերաշնորհ Տ. Ներսէս եպիսկոպոս Պոլապալեանի միջնորդութեան, այսու Մեր կոնդակով կը շնորհենք ձեզի «Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ» շքանշանը, մաղթելով, որ վայն կրէք ձեր կուրծքին վրայ բաւում երկար տարիներ արդար պարծանքով, քաջառողջութեամբ եւ ընտանեկան երջանկութեամբ:

«Ողջ լերուք վօրացեալ Սուրբ Հոգւով եւ յաւէտ օրհնեալ ի Տեառնէ եւ ի Մէնջ». ամէն»:

Հայրապետական օրհնության կոնդակի և «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանի են արժանացել պարոնայք՝

1. Հակոբ Փալամուտյան
2. Հարություն Այվազյան
3. Միքայել Փաշայան
4. Սիմոն Ալեքսանյան

Իսկ Տիկնանց Օժանդակ Հանձնախմբից՝ տիկնայք՝

1. Մարգարիտ Շիշմանյան
2. Սևան Գրիգորյան
3. Ֆլորա Ապաճյան
4. Օֆելյա Գույումճյան: